ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 55 -Ա

..03.. դեկտեմբեր 2026թ.

ք.Արտաշատ

«Ա.Բ.Ա ՖԱՐՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ղեկավարի 03.12.2025 թ. թիվ Ե-6002 գրությունը՝

ՊԱՐԶԵՑԻ

1. **Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.**

2025 թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմը ստացել է Արտաշատ համայնքի ղեկավարի 03.12.2025 թ. թիվ Ե-6002 գրությունը՝ համաձայն որի՝ համայնքի տարածքում հայտնաբերվել է գովազդային վահանակի տեղադրման դեպք՝ առանց համայնքի ղեկավարի թույլտվության, ինչի առիթով համայնքապետարանի աշխատակիցների կողմից կազմվել է համապատասխան արձանագրություն:

09.12.2025 թ. Արարատի մարզպետի կողմից «Ա.Բ.Ա ՖԱՐՄ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ տնօրեն Արմեն Բադեյանին փոստային եղանակով ուղարկվել է ծանուցագիր, որով վերջինիս առաջարկվել է ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված խախտումը: Ծանուցագրի ստացման ետադարձ կտրոնի համաձայն Ա. Բադեյանը ծանուցագիրը ստացել է 12.12.2025 թ.-ին:

24.12.2025 թ. Արարատի մարզպետի /այսուհետ՝ Մարզպետ/ կողմից գրություն է առաքվել Արտաշատ համայնքի ղեկավարին՝ խնդրելով հայտնել՝ արդյո՞ք Ընկերության կողմից գովազդի թույլտվության համար դիմում ներկայացվել է կամ խախտումը վերացնելու ուղղությամբ այլ միջոցներ ձեռնարկվել են, թե՝ ոչ, ինչին ի պատասխան համայնքի ղեկավարը 29.12.2025 թ. թիվ Ե-6513 գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից գովազդի մասին դիմում չի ներկայացվել կամ խախտումը վերացնելու ուղղությամբ այլ միջոցներ չեն ձեռնարկվել:

Մարզպետի 09.01.2026 թվականի թիվ 01/00133-2026 ծանուցագրով Ընկերության տնօրեն Արմեն Բաղեյանին առաջարկվել է 2026 թվականի հունվարի 20-ին ներկայանալ Մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժին՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով: Լինելով պատշաճ ծանուցված՝ վերջինս չի ներկայացել:

Մարզպետի 20.01.2026 թվականի թիվ 01/00375-2026 ծանուցագրով Արմեն Բաղեյանը հրավիրվել է մասնակցելու վարչական վարույթի շրջանակում 2026 թվականի հունվարի 30-ին նշանակված լսմանը: Լինելով պատշաճ ծանուցված վերջինս դարձյալ չի ներկայացել:

2. <u>Վարչական ակտն ընդունելու հիմանավորումը</u>.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Ընկերության տնօրեն Արմեն Բաղեյանը ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23 փողոցի թիվ 89/2 հասցեում գտնվող օբյեկտի շինության /դեղատան/ վրա տեղադրել է գովազդային միջոց՝ առանց համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան թույլտվության:

Համաձայն «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ պարբերության՝ Արգելվում է առանց համայնքի ղեկավարի թույլտվության և համայնքի ավագանու կողմից սահմանված գոտիներից դուրս համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում, հենասյուների,

էլեկտրասյուների, ծառաբների, քաղաքային կահավորանքների, ինչպես նաև ցանկացած այլ հանրային վայրերում արտաքին գովազդի, ինչպես նաև նախատեսված վահանակներից դուրս հայտարարությունների տեղադրումը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգին ու պայմաններին համապատասխան տալիս է արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն:

Համաձայն նույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի՝ համայնքի ավագանին սահմանում է համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները:

Համաձայն Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 340-Ն որոշման հավելվածի 14-րդ կետի 4-րդ ենթակետի՝ այլ արտաքին գովազդի համար մեկ քառակուսի մետր գովազդային միջոցի համար տեղական տուրքի դրույքաչափը կազմում է ամսական 1125 (հազար հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ:

Համաձայն «Գովազդի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինն իրավասու է, համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության, տուգանք կիրառել գովազդատուի, գովազդ արտադրողի, գովազդակրի նկատմամբ գովազդային օրենսդրության խախտման մասին իր ծանուցագրերի պահանջների կատարումից խուսափելու կամ ժամանակին չկատարելու համար»: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գովազդատու, գովազդ արտադրող, գովազդակիր ձեռնարկությունների ղեկավարները սույն հոդվածի առաջին կետով նախատեսված խախտումների համար կրում են վարչական պատասխանատվություն: Այդ դեպքում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինն իրավունք ունի նրանց նկատմամբ կիրառել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի մինչև 100-ապատիկի չափով»:

Համաձայն ՀՀ կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 917 որոշման 1-ին մասի՝ գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասություններն արտաքին գովազդի մասով Հայաստանի Հանրապետության մարզերում վերապահված է մարզպետներին:

Սույն գործի փաստերի համաձայն Մարզպետը պատշաճ կերպով ծանուցել է Ընկերության տնօրենին գովազդային օրենսդրության խախտման մասին՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ դրանք վերացնելու համար, մինչդեռ նշված պահանջը չի կատարվել:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Սույն վարչական վարույթի ընթացքում և նյութերի ուսումնասիրության արդյունքում Ընկերության տնօրեն Ա. Բաղեյանի պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներ չեն արձանագրվել:

3. **Եզրափակիչ մաս**

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով «Գովազդի մասին» օրենքի 26-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 917 որոշման 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Ա.Բ.Ա ՖԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արմեն Բաղեյանի նկատմամբ կիրառել տուգանք՝ 45.000 /քառասուն հինգ/ ՀՀ դրամ գումարի չափով:
2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Արտաշատ համայնքի տեղական գանձապետարանի՝ վարչական իրավախախտումների, տուգանքների, պատժամիջոցների համար նախատեսված N 900415151472 հաշվեհամարին:
3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել ՀՀ Արարատի մարզպետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ արդարադատության նախարարության հարկադիր

կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 283-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով որոշումը համարվում է հանձնված (պատշաճ ծանուցված)՝ որոշման մասին ծանուցումն ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ